ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2026 թվականի N 131 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 712-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում ոստիկանության ծառայության, ոստիկանությունում ծառայության, պետական պահպանության, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի 8.1-ին և 8.2-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «Է»,» տառը և կետադրական նշանը.

3) որոշմամբ սահմանված N 8 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 5-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ոստիկանության գվարդիայի դատավարության մասնակիցների պաշտ-պանության բաժնի (խմբի) ծառայողներ»,

բ. ուժը կորցրած ճանաչել 8-րդ և 9-րդ կետերը,

գ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Ոստիկանության գվարդիայի ուղեկցող սպայական վաշտի ծառայողներ»,

դ. ուժը կորցրած ճանաչել 13-րդ կետը,

ե. 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Ոստիկանության գվարդիայի արտաքին ծառայություն իրականացնող (շարքային կազմից մինչև գումարտակի հրամանատար) ծառայողներ».

4) ուժը կորցրած ճանաչել NN 8.1 և 8.2 հավելվածները.

5) գաղտնի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ